ՎՈՒՈՂՅԱ ՄԱՆԱՍՅԱՆ
ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության
ամբիոնի դոցենտ,
աշխարհագրական գիտությունների թեկնածու

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԱԾՔԱՅՈՒՂԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ՝ ՀՀ-ՈՒՄ ԶԱՐԳԱՑԱԾ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Հոդվածում քննարկվում է ՀՀ հացահատիկային տնտեսության ժամանակակից վիճակը, բացահայտվում են ենթաճյուղի զարգացումը պայմանավորող բնապատմական, սոցիալ-տնտեսական և ագրոէկոլոգիական օրինաչափությունները:

Բնութագրվում են հացահատիկային ենթաճյուղի կառուցվածքի գոտիական մասնագիտացման և համակենտրոնացման ձևավորմանը նպաստող ագրոարտադրական ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործման հնարավորությունները: Մատնանշվում է, որ հացահատիկային տնտեսության արդյունավետության ցածր մակարդակը պայմանավորված է հացահատիկի արտադրության մեջ աշխատանքի տարածքաճյուղային բաժանումից հրաժարվելու, ենթաճյուղին պետական աջակցությունը կտրուկ կրճատելու և հացահատիկային շուկայի ենթակառուցվածքների թույլ զարգացածության պատճառներով:

Առաջարկվում է պետության կողմից հացահատիկի արտադրության գործում աշխատանքի տարածքաճյուղային բաժանման գործընթացի պետական աջակցություն՝ հսկողության մեծացման առումով, որի առավելությունները գործնականում ապացուցվել են:

Հիմնաբառեր. *տարածքաճյուղային կառուցվածք, մասնագիտացված գոտիներ, ներմուծում և արտահանում, հացահատիկային մշակաբույսեր, պետական կարգավորում, բնառեսուրսային ներուժ, մարզեր և տարածաշրջաններ*

JEL: O13, Q1, Q13

ՀՀ բարդ լեռնային տարածքի, տնտեսավարման բնական, տնտեսական և սոցիալական պայմանների բազմազանությամբ պայմանավորված՝ տնտեսության ագրարային հատվածի գործառույթների արդյունավետությունը՝ ընդհանրապես, հացահատիկային տնտեսությունը՝ մասնավորապես, հիմնականում որոշվում են աշխատանքի տարածքաճյուղային բաժանման համակարգով:

Այդ բարդ և բազմակողմանի հիմնախնդրի լուծման մեջ տարբեր է առանձին մարզերի ու տարածաշրջանների դերը, քանի որ տարածքային առանձնահատկությունները կանխորոշում են էական տարբերությունները ինչպես աճեցվող հացահատիկային մշակաբույսերի ընտրության, արտադրության ինտենսիվության մակարդակի, այնպես էլ ներքին և արտահանության ռեսուրսներ ձևավորող հացահատիկի մատակարարման ծավալների մեջ: Բավական է նշել, որ առանձին մարզերի հացահատիկային մշակաբույսերի բերքատվության մեջ տարբերությունը կազմում է գրեթե 2.0, ինքնարժեքի մեջ՝ ավելի քան 1.6, աշխատատարության մեջ՝ 3.5 անգամ: Զգալիորեն տարբերվում են մարզերը և տարածաշրջանները հացահատիկի արտադրության շահութաբերության մակարդակով, ապրանքայնությամբ, որակական բնորոշումներով, մրցունակությամբ և սեփական արտադրության հացահատիկով ապահովվածությամբ:

Պետք է ընդգծել, որ գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատանքի տարածքաճյուղային բաժանման սկզբունքի վրա կողմնորոշվող ագրարային հատվածի վարման մինչբարեփոխումային իրականությունը ակնառու կերպով ցույց էր տալիս հացահատիկային ենթաճյուղի կառուցվածքի ռացիոնալ տարածքային կազմակերպմանը, մասնագիտացման խորացմանը և համակենտրոնացմանը, հացահատիկային արտադրության միասնացմանը նպաստող երկրագործության տարածաշրջանային համակարգերի ներդրման հեռանկարայնությունը:

ԽՍՀՄ փլուզման և շուկայական հարաբերություններին տնտեսության ագրարային հատվածի տարերային անցման հետևանքով իրադրությունը արմատապես փոխվեց, հացահատիկային ենթաճյուղում աշխատանքի տարածքաճյուղային բաժանման համակարգը, ըստ էության, ինքնալուծարվեց: Շուկայական տնտեսավարման սկզբունքի գերակշռության պայմաններում գյուղատնտեսական ապրանքարտադրողները սկսեցին արտադրել առավելապես գյուղատնտեսական մթերքների այն տեսակները, որոնք կարելի էր առավել շահավետ կերպով իրացնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում՝ բոլորովին չկշռադատելով և հաշվի չառնելով հանրապետության տնտեսական շահերը:

Հիմնականում դրան նպաստեցին. առաջին՝ իրենց տարածքները պարենամթերքով ապահովելու նպատակով իշխանության մարզային մարմինների պատասխանատվությունը նախատեսող կենտրոնի կողմից վարվող քաղաքականությունը, որն ավելի գործնական դարձրեց մարզերի ձգտումները հացահատիկի հիմնական տեսակներով ինքնաբավության նկատմամբ, երկրորդ՝ ենթաճյուղի ցածր եկամտաբերությանը և դրա վարման պայմանների վատթարացմանը հանգեցնող հացահատիկային տնտեսության պետական աջակցության կտրուկ կրճատումը, երրորդ՝ արդյունավետ կազմակերպատնտեսական մեխանիզմների բացակայությունը, առանձին հացահատիկային մշակաբույսերի աճեցման ռացիոնալ տեղաբաշխման պետական աջակցու-

թյան սահմանափակությունը՝ առաջին հերթին գյուղատնտեսական գոտու ագրոկլիմայական պայմանների և բնառեսուրսային ներուժի գնահատման և ինտեգրող շրջանացման արդյունքների առավելագույն հաշվառմամբ, չորրորդ՝ հացահատիկային շուկայի ենթակառուցվածքների թերի զարգացումը, հանրապետության տարածքով հացահատիկի տեղափոխության բարձր սակագները, հինգերորդ՝ ենթաճյուղի ցածր և անկայուն եկամտաբերությունը, մարզերում և տարածաշրջաններում հացահատիկային տնտեսության վարման անհերթափոխ (մոնոմթերային) բնույթի պարագայում ոչ բարձր որակի հացահատիկի արտադրությունը, վեցերորդ՝ գրեթե ամենուրեք հանրապետության տարածքում դիտվում է հացահատիկային տնտեսության արդյունավետությանն առնչվող հողային ծածկի վատթարացման և բերրիության անկման գործընթացների զարգացում, և էկոլոգիական վիճակը անհրաժեշտ լուծում պահանջող կամ նույնիսկ ճգնաժամային խնդիր է համարվում:

Հացահատիկային արտադրության տեղաբաշխումը միայն շուկայական նպատակահարմարության հայեցակետով խախտեց տնտեսություններում ձևավորված ցանքաշրջանառությունը և միջմարզային փոխանակությունը, տնտեսական անկայունության պայմաններում հացահատիկային շուկայի առավելապես տարերային գործելակերպը ինքնաբավության նկատմամբ մարզերում ձգտումներ առաջացրեց նույնիսկ հացահատիկի այն տեսակների նկատմամբ, որոնց արտադրության համար չունեին պահանջվող բնական և տնտեսական պայմաններ: Պարենամթերքով առավելագույն ինքնաբավության տարածաշրջանային քաղաքականության իրականացումը հացահատիկի թանկացման և դրա որակի վատթարացման, հացահատիկային արտադրության ապամասնագիտացման, աճեցման համար առավել բարենպաստ ագրոկլիմայական պայմաններով մարզերում և տարածաշրջաններում առանձին հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների համակենտրոնացման մակարդակի իջեցման, միաժամանակ այլ տարածքներում դրանց չարդարացված կերպով բարձր աստիճանի համակենտրոնացման պատճառ դարձավ:

1990-ական թվականներին հանրապետության բոլոր մարզերը և տարածաշրջանները գործնականում հացահատիկ արտադրողների վերածվեցին: 1998–1999 թթ. տվյալներով վարելահողերի ընդհանուր տարածության 56.8%-ը զբաղեցնում էին հացահատիկային մշակաբույսերը: Հացահատիկի ցանքատարածությունները 1990 թ. համեմատությամբ ավելացել էին ավելի քան 21.2%-ով, մինչդեռ համախառն բերքը՝ միայն 10.9%-ով: Հիմնական պատճառը ցածր բերքատվությունն էր. 1998 թ. կազմել էր 17.1 g/հա՝ 1990 թ. 19.6 g/հա-ի փոխարեն:

Մինչև ագրարային բարեփոխումների սկիզբը հանրապետությունում գործով ճշտված և գիտականորեն հիմնավորված հացահատիկի արտադրության տարածքաճյուղային կառուցվածքը հաշվի էր առնում յուրաքանչյուր վարչական շրջանի դերը կերային հատիկատեսակների մատակարարման, ապրանքային ռեսուրսների ձևավորման, միջշրջանային մատակարարումների մեջ:

Երկրագործության՝ տարիներով ձևավորված ավանդույթները, արմատավորված ցանքաշրջանառության համակարգերը, ցանքատարածությունների կառուցվածքը ծագող «շուկայական նպատակահարմարության» առաջ կորցրին իրենց նշանակությունը՝ արագ եկամուտը որպես հեռանկար ունենալով:

Բավական է նշել, օրինակ, վերջին տարիների ընթացքում արևածաղկի (յուղատու և հրուշակեղենի) գործնականորեն անվերահսկելի աճեցման ընդարձակումը, որի ցանքատարածությունները Լոռու, Արմավիրի և Տավուշի մարզերի առանձին գյուղական համայնքներում շատ անգամ գերազանցել են ագրոտեխնիկական սահմանված չափերը:

Դա ամբողջապես վերաբերում է նաև հացահատիկային մշակաբույսերին, որոնք այժմ աճեցնում են գրեթե ամենուրեք, որտեղ հնարավոր է երկրագործությամբ զբաղվել: Օրինակ՝ 2013–2017 թթ. հացահատիկների մասնաբաժինը հանրապետության բոլոր մարզերի գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքում կազմում էր 54.5%-ը՝ զգալիորեն գերազանցելով ագրոտեխնիկական պահանջները (աղյուսակ 1): Ընդ որում, պարենային հացահատիկների մասնաբաժինը ցանքատարածությունների գրեթե 2/3-ն է կազմել և հետագա աճի անշեղ միտումներ ունի: Գերակշռող դիրք է գրավում ցորենը, որի ցանքատարածությունները հանրապետության հացահատիկային հողատարածությունների կեսից ավելին են՝ 56.0%-ը:

Հացահատիկի և դրա վերամշակման մթերքների ռազմավարական նշանակությունը, հացահատիկային ենթաճյուղի վարման ֆիզիկական ու արժեքային ծավալները, դրանում ներգրավված նյութական ու ֆինանսական ռեսուրսների քանակը, միջճյուղային, միջգոտիական և միջմարզային ընդարձակ կապերը, տեղի ունեցող գործընթացները հսկայական ազդեցություն են ունենում ոչ միայն հացահատիկային ու ագրոպարենային շուկաների, այլև հանրապետության ամբողջ տնտեսության, դրա պարենային անվտանգության ու պարենապահովման վիճակի վրա:

Միաժամանակ, այժմյան հացահատիկային տնտեսության մեջ փաստացի անվերահսկողություն է դիտվում, բացակայում է պետության գործուն ազդեցությունը հացահատիկի արտադրության և հացահատիկային քաղաքակիրթ շուկայի կատարելագործման առումներով:

Ներքին և արտաքին հացահատիկային շուկաներում մրցակցության անկայունությունը, հացահատիկի ներհանրապետական տեղափոխության տրանսպորտային չարդարացված բարձր սակագները ամենևին չեն նպաստում հացահատիկային արտադրության ռացիոնալ տարածքաճյուղային կառուցվածքի որոշարկմանը, դա խորացվում է տարածքի ագրոկլիմայական պայմանների և բնառեսուրսային ներուժի սակավարդյուն օգտագործմամբ և, որպես կանոն, հանգեցնում է որևէ մարզի տարածքով սահմանափակված տեղական փակ շուկաների ձևավորմանը:

Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների տեղաբաշխման և դրանց համախառն բերքի մեջ, 1986–1990 թթ. հետ համեմատած, 2013–2017 թթ. տեղի ունեցած կառուցվածքային տեղաշարժերը հանգեցրին մասնավորապես՝ Շիրակի մարզի մասնաբաժնի համապատասխանաբար՝ 1,1 և 6,5 տոկոսային կետերով պակասեցմանը, իսկ Սյունիքի մարզի մասնաբաժնի 1,7 և 6,1 տոկոսային կետերով ավելացմանը (աղյուսակ 2): Դա հիմնականում կարելի է բացատրել գյուղատնտեսական կենդանիների և թռչունների գլխաքանակի կրճատման ավելի բարձր տեմպերով և, որպես հետևանք, Լոռու, Շիրակի և Վայոց ձորի մարզերում կերային հացահատիկի պահանջարկի պակասեցմամբ՝ միաժամանակ ներմուծմամբ հայրենական անասնաբուծական մթերքները փոխարինելով: Սակայն հացահատիկային

մշակաբույսերի ցանքատարածությունների մասնակի տեղափոխությունը Արարատի ու Տավուշի և հատկապես Գեղարքունիքի ու Սյունիքի հացահատիկ արտադրող մարզերի առանձին տարածաշրջաններ առաջ բերեց հացահատիկի արտադրության անկայունության մակարդակի բարձրացում կլիմայի համեմատաբար ցամաքայնության և առավելապես ավելի պակաս բերքատու գարնանացան հացահատիկային մշակաբույսերի աճեցման, ինչպես նաև ցածրադիր գոտու ավելի խիտ բնակեցված և կերային հացահատիկապակասուրդային մարզերում հացահատիկի տեղափոխության ծավալների ավելացման պատճառներով:

Աղյուսակ 1

Ցանքատարածությունների կառուցվածքում հացահատիկային մշակաբույսերի մասնաբաժնով ՀՀ մարզերի խմբավորումը[1]

Ցանքատարածությունների կառուցվածքում հացահատիկային մշակաբույսերի տեսակարար կշռով մարզերի խմբերը (%)		Խմբում մարզերի քանակը	Տեսակարար կշիռը			Մեկ մարզին միջին հաշվով բաժին է ընկնում		Հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը (ց/հա)
			ընդհանուր ցանքատարածությունների մեջ հացահատիկային մշակաբույսերը (%)	խմբեր				
				հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություններում (%)	հացահատիկի համախառն բերքում (%)	հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները (հազ.հա)	հացահատիկի համախառն բերքը (հազ. տ)	
2008–2012 թթ.								
I	մինչև 10,0	-	-	-	-	-	-	-
II	10,0-20,0	-	-	-	-	-	-	-
III	20,1-30,0	3	4.0	7.3	10.5	3.98	13.8	33.1
IV	30,1-40,0	1	3.2	5.8	4.6	9.53	18.3	20.0
V	40,1-50,0	-	-	-	-	-	-	-
VI	50,1-60,0	3	17.8	32.0	35.8	17.57	47.3	24.8
VII	60,1-70,0	3	22.8	40.9	35.8	22.44	47.5	20.0
VIII	70-ից ավելի	1	7.8	14.0	13.3	23.14	52.7	22.8
Ընդամենը		11	55.7	100.0	100.0	26.89	36.1	24.3
2013–2017 թթ.								
I	մինչև 10,0	-	-	-	-	-	-	-
II	10,1-20,0	2	1.7	3.1	4.5	2.8	12.1	37.5
III	20,1-30,0	1	1.8	3.3	5.2	6.1	27.6	44.5
IV	30,1-40,0	-	-	-	-	-	-	-
V	40,1-50,0	1	4.4	8.0	7.7	14.7	40.9	32.3
VI	50,1-60,0	3	15.4	27.6	27.3	16.9	48.4	28.1
VII	60,1-70,0	3	25.3	45.5	43.6	27.9	77.2	26.9
VIII	70-ից ավելի	1	7.1	12.5	11.7	22.9	62.1	26.5
Ընդամենը		11	55.6	100	100	16.7	48.3	29.0

[1] Տե՛ս Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում, 2006–2010, ՀՀ ԱՎԾ, վիճակագրական ժողովածու, Եր., 2011, էջ 15, 21, 28, 34, 40: Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում, 2011–2015, ՀՀ ԱՎԾ, վիճակագրական ժողովածու, Եր., 2016, էջ 16, 28, 47, 50, 62, 81: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2016 թ., ՀՀ ԱՎԾ, վիճակագրական տեղեկագիր, Եր., 2017, էջ 25, 27, 62: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2017 թ., ՀՀ ԱՎԾ, վիճակագրական տեղեկագիր, Եր., 2018, էջ 15, 28, 63:

Հացահատիկի տեղափոխության տրանսպորտային սակագների աճը, որը 1 տ հացահատիկի գներում գրեթե 20–25%-ի է հասնում 100–150 կմ հեռավորության դեպքում, այդ մարզերում ու տարածաշրջաններում էականորեն բարձրացնում է համակցված կերերի և անասնաբուծական մթերքների արտադրության ինքնարժեքը: ՀՀ-ում հացահատիկի արտադրությունը հիմնականում կողմնորոշված է հացահատիկի ներքին սպառման ուղղությամբ, և դրա արտահանումը, որը, տրանսպորտային ուղիների առումով հարմար տեղադիրք ունեցող մարզերում ու տարածաշրջաններում վերացնելով «խոնավակալած» հացահատիկի շուկաների վրա ճնշումը, առանձին տարիներին ցածրադիր ու նախալեռնային գոտիների մարզերի համար հատիկախարի ապահովման իմաստով դժվարություններ է ստեղծում:

Աղյուսակ 2

Հացահատիկի արտադրության տեղաբաշխումը Հայաստանի Հանրապետության մարզերում[2]

Մարզեր	1986–1990				2008–2012				2013–2017			
	Ցանքատարածությունները		Համախառն բերքը		Ցանքատարածությունները		Համախառն բերքը		Ցանքատարածությունները		Համախառն բերքը	
	(հազ. հա)	(%)	(հազ. տ)	(%)	(հազ. հա)	(%)	(հազ. տ)	(%)	(հազ. հա)	(%)	(հազ. տ)	(%)
Երևան	0,14	0,2	0,53	0,2	0.54	0.3	0.51	0.2	0.09	0.1	0.36	0.1
Արագածոտն	21,2	16,1	29,18	11,5	23.14	14.0	52.74	13.3	26.59	14.6	74.32	14.0
Արարատ	3,18	2,4	10,65	4,2	5.09	3.1	19.13	4.8	6.11	3.3	27.57	5.2
Արմավիր	4,96	3,8	20,22	8,0	6.69	4.0	21.57	5.5	5.98	3.3	23.88	4.5
Գեղարքունիք	26,14	19,9	44,7	17,6	42.96	26.1	116.37	29.3	39.82	21.8	108.2	20.3
Լոռի	9,78	7,4	23,13	9,1	9.53	5.8	18.77	4.7	12.75	7.0	40.92	7.7
Կոտայք	10,71	8,1	0,97	0,4	10.53	6.4	17.52	4.4	12.42	6.8	29.82	5.6
Շիրակ	32,99	25,1	77,52	30,5	37.61	22.8	89.06	22.4	44.62	24.5	127.4	24.0
Սյունիք	14,31	10,9	29,58	11,6	19.19	11.6	35.82	9.0	22.9	12.6	62.12	17.7
Վայոց ձոր	3,01	2,3	3,82	1,5	2.59	1.6	4.85	1.2	2.88	1.6	6.9	1.3
Տավուշ	5,05	3,8	13,62	5,4	7.16	4.3	20.55	5.2	8.08	4.4	6.95	5.6
ՀՀ	131,48	100,0	253,97	100,0	164.70	100.0	396.9	100.0	182.28	100.0	531.6	100.0

Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքի վրա բացասաբար են ներգործել ավելի շատ պարենային հացահատիկի, քան կերայինի արտադրությունը խթանող գները: Չգտելով իրենց ապահովել տարբեր տեսակների հացահատիկով և հնարավոր համարելով դրանց իրացման բարձր գները՝ աշնանացան ցորենի շրջանացված Բեզոստայա-1, Արմյանկա-60, Ախթամար և ուրիշ սորտերի ավանդական աճեցման մարզերում ու տարածաշրջաններում կրճատեցին կամ նույնիսկ վերացրին դրանց ցանքատարածությունները: Այդպիսի ապամասնագիտացումը, ուրիշ գործոնների հետ միասին, հանգեցրեց ոչ միայն ներքին ու արտաքին շուկա-

[2] Տե՛ս Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը շրջանային կտրվածքով՝ ըստ տնտեսությունների կարգի 1980–1990 թթ., ՀՀ վիճակագրություն, Եր., 1991, էջ 2, 34, 45, 53: Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում, 2006–2010, ՀՀ ԱՎԾ, Եր., վիճակագրական ժողովածու, 2011, էջ 15, 21, 28, 34: Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում, 2011–2015, ՀՀ ԱՎԾ, վիճակագրական ժողովածու, Եր., 2016, էջ 16, 28, 50, 62: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2016 թ., ՀՀ ԱՎԾ, վիճակագրական տեղեկագիր, Եր., 2017, էջ 15, 27: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2017 թ., ՀՀ ԱՎԾ, վիճակագրական տեղեկագիր, Եր., 2018, էջ 15, 28:

ներում մշտապես պահանջված այդ պակասուրդային սորտերի հացահատիկի արտադրության տեղաբաշխման վատթարացմանը և համակենտրոնացման մակարդակի իջեցմանը, այլև արտադրանքի քանակի նվազեցմանն ու թանկացմանը, ցորենի որակի անկմանը և միջմարզային ու ներմարզային մատակարարումների կրճատմանը:

Այս համատեքստում բացառիկ կարևորություն ունեն հացահատիկի ցանքատարածությունների ընդարձակումը և համախառն բերքի ավելացումը դրա ապրանքային արտադրության ավանդական մարզերում ու տարածաշրջաններում: Ամենից առաջ դա վերաբերում է Շիրակի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերին, որտեղ 2013–2017 թթ. բնակչության մեկ շնչի հաշվով հաստատուն կերպով արտադրվել է 510,8 կգ համեմատաբար էժան և բարձր որակի հացահատիկ, համակենտրոնացվել է հացահատիկի ցանքատարածությունների 60,9%-ը և հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի ծավալի 58,3%-ը, ինչպես նաև ապրանքային ռեսուրսների 68–70%-ը (աղյուսակ 3): Նշված մարզերը հացահատիկով սեփական պահանջմունքները բավարարելու համեմատաբար մեծ ներուժ ունեն: Բացի դրանից, պետության աջակցության դեպքում հացահատիկային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման պարագայում կարող են հացահատիկի ապրանքային ռեսուրսների ավելացման առումով ապահովել շոշափելի և համեմատաբար արագ փոխհատուցում, ներքին շուկայում մատակարարման ավելացում, բյուջեի եկամտային մասի համալրում, հանրապետության պարենային անվտանգության ու պարենապահովման վիճակի բարելավում:

ՀՀ-ում արդեն վաղուց հասունացել է հացահատիկային տնտեսության զարգացումը առավելապես այն մարզերում ու տարածաշրջաններում հացահատիկի առանձին տեսակների արտադրության գծով մասնագիտացված գոտիների ձևավորման ուղղությամբ վերակողմնորոշելու, որտեղ այն էժան է ու բարձրորակ, ինչպես դա տեղի ունեցավ նպատակասլացորեն և պետության հսկողության ներքո՝ ագրարային հատվածի զարգացման մինչբարեփոխումային ժամանակաշրջանում: Հանրապետության տնտեսական զարգացումը հենց այդ ուղիով է ընթանալու, ընդ որում, պետությունը ոչ միայն նպաստելու է հացահատիկային արտադրության ավելի ռացիոնալ տեղաբաշխմանը, այլև համահանրապետական, մարզային ու տարածաշրջանային և համայնքային մակարդակներով տարբեր բնույթի կազմակերպական, տնտեսական և օրենսդրական միջոցառումների միջոցով կարգավորելու է այդ շարժուն գործընթացը:

Նորարարական տեխնոլոգիաների զարգացման հետ միասին ագրոկլիմայական, կենսաբանական, տեխնածին և աշխատանքային ռեսուրսների տարբերակված օգտագործումը դառնում է հացահատիկային տնտեսության վարման արդյունավետության մակարդակի բարձրացման կարևոր գործոններից մեկը: Դա, իր հերթին, ենթադրում է հացահատիկային մշակաբույսերի առանձին տեսակների աճեցման գծով հացահատիկ արտադրող մարզերի ու տարածաշրջանների մասնագիտացման խորացում, առավել բարենպաստ լանդշաֆտային ուղղաձիգ գոտիներում ցանքատարածությունների համակենտրոնացում հացահատիկ արտադրող և սպառող մարզերի ու տարածաշրջանների տնտեսական միասնացման ընդարձակմանը զուգահեռ:

Աղյուսակ 3

Բնակչության մեկ շնչի հաշվով հացահատիկի արտադրության մակարդակով ՀՀ մարզերի խմբավորումը[3]

	Բնակչության մեկ շնչի հաշվով հացահատիկի արտադրության մակարդակով մարզերի խմբավորումը (կգ)						Ընդամենը և միջին հաշվով	
	I – մինչև 100,0		II – 100,1-300,0		III – 300,1-ից ավելի			
	2008-2012	2013-2017	2008-2012	2013-2017	2008-2012	2013-2017	2008-2012	2013-2017
Խմբում մարզերի թիվը	6	2	2	5	3	4	11	11
Համախառն բերքը (հազ. տ)	82.4	24.2	56.4	135.4	258.2	372.0	397.0	531.7
Ընդամենի նկատմամբ (%)	20.8	4.5	14.2	25.5	65.0	70.0	100.0	100.0
Ցանքատարածությունները (հազ. հա)	35.0	6.08	26.4	42.2	103.7	133.9	165.1	182.3
Ընդամենի նկատմամբ (%)	21.2	3.3	16.0	23.2	62.8	73.5	100.0	100.0
Բերքատվությունը (գ/հա)	25.8	36.6	23.6	31.4	24.7	27.4	25.1	30.9
Հացահատիկի իրացումը ընդամենի նկատմամբ (%)	17,1	15,5	17,4	15,1	65,5	69,4	100.0	100.0
Հասույթը հացահատիկի իրացումից ընդամենի նկատմամբ (%)	18,0	15,5	17,4	14,6	64,6	69,9	100.0	100.0
1 տ իրացման գինը (հազ. դրամ)	117,7	138,3	110,8	132,0	109,3	130,1	112,6	133,5
Շահույթը հացահատիկի իրացումից ընդամենի նկատմամբ (%)	8,8	7,4	18,7	13,5	72,5	79,1	100.0	100.0
Շահութաբերության մակարդակը (%)	12,0	11,4	30,8	22,7	27,6	25,3	23,5	19,8
Արտադրությունը բնակչության մեկ շնչի հաշվով (կգ)								
հացահատիկ	36.4	18.1	198.6	404.3	393.9	498.0	124.0	174.0
միս	23.3	8.3	68.4	35.2	83.6	57.5	4.0	28.8
կաթ	104.0	18.1	336.1	138.5	443.0	270.6	19.3	117.7
ձու (հատ)	274.2	546.3	239.0	1652.1	240.6	1391.3	264.3	1102.8

[3] Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում, 2006-2010, ՀՀ ԱՎԾ, վիճակագրական ժողովածու, Եր., 2011, էջ 15, 21, 28, 34, 40, 129, 131, 132: Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում, 2011–2015, ՀՀ ԱՎԾ, վիճակագրական ժողովածու, Եր., 2016, էջ 16, 28, 47, 50, 62, 81, 115, 116, 117: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2016 թ., ՀՀ ԱՎԾ, վիճակագրական տեղեկագիր, Եր., 2017, էջ 25, 27, 62: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2017 թ., ՀՀ ԱՎԾ, վիճակագրական տեղեկագիր, Եր., 2018, էջ 15, 28, 63: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թ., հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, վիճակագրական ժողովածու, Եր., 2017, էջ 19: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թ., հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, վիճակագրական ժողովածու,Եր., 2018, էջ 19:

Հացահատիկային տնտեսության գոտիական մասնագիտացման և արդյունավետ գործընթացների զուգակցմամբ առաջին հերթին ներքին՝ մարզային, իսկ այնուհետև նաև համահանրապետական հացահատիկային շուկաների պահանջարկի ուղղությամբ հստակ կողմնորոշման և խոշորածավալ պետական աջակցության դեպքում հնարավորություն է ստեղծվում կարճ ժամանակահատվածում տնտեսության ագրարային հատվածի այդ կարևոր ենթաճյուղը արդյունավետ արտադրության վերածելու, իսկ հացահատիկային շուկան՝ ագրոպարենային շուկայի բարձր եկամտաբերությամբ հատվածամասի:

Ագրարային հովանավորական ակտիվ քաղաքականությունը, խոշորածավալ պետական աջակցությունը կնպաստեն հացահատիկային տնտեսության ներուժի ամրապնդմանը, որը թույլ կտա զգալիորեն զարգացնել հացահատիկային ենթաճյուղը՝ կարևորելով հացահատիկային մշակաբույսերի առանձին տեսակների աճեցման համար առավել բարենպաստ ագրոկլիմայական պայմաններով արեալները: Այդպիսի մասնագիտացված գոտիների ստեղծումը, թերևս, համարվելու է հացահատիկային տնտեսության ինտենսիվացման և գյուղացիական տնտեսություններում ու տնտեսավարման այլ ձևերում զարգացած սոցիալական, արտադրական ու շուկայական ենթակառուցվածքների զարգացման, ագրոսպասքակազմի ծառայությունների լայն ցանցի գործառույթների բնական արդյունքը: Ընդ որում, ենթակառուցվածքների զարգացման տեմպերը և ծավալները գերազանցելու են հացահատիկային արտադրության հնարավորությունները՝ միաժամանակ թույլ տալով լիակատար իրացնել դրա ներուժը, առաջին հերթին օգտագործելով առկա ագրոկլիմայական ռեսուրսները: Շուկայական հարաբերությունները բնական և տնտեսական գործոնների հետ միասին միայն արագացնելու են հացահատիկի առանձին տեսակների արտադրության մասնագիտացված գոտիների առավել բարենպաստ արեալներում՝ «աճի կենտրոններում» դրանց ցանքատարածությունների առավելագույն համակենտրոնացման միջոցով «բևեռացման» գործընթացը[4]:

Հացահատիկի առանձին տեսակների ապրանքային արտադրության մասնագիտացված խոշոր գոտիների ձևավորումն օբյեկտիվ գործընթաց է, որը արագանում է արտադրողական ուժերի և շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, բազմաթիվ գործոնների զուգակցման ներգործությամբ, որոնցից կարելի է նշել ագրոկլիմայական պայմանների համապատասխանությունը հացահատիկային մշակաբույսերի աճեցման կենսաբանական որոշակի պահանջներին: Թեև տվյալ դեպքում որպես արտադրողական ուժեր հանդես եկող ագրոկլիմայական պայմանների ազդեցությունը հացահատիկային տնտեսության վարման վրա, դրա ինտենսիվացման աճին զուգահեռ նվազում է, այնուամենայնիվ դրանց դերը չի նվազում, այլ, ընդհակառակը, աճում է նորարարական տեխնոլոգիաների զարգացման հետ միաժամանակ: Դա բացատրվում է նրանով, որ, այլ հավասար պայմանների դեպքում, հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը, հացահատիկի որակը, ծախսերի փոխհատուցումը, հետևաբար նաև շահույթը բարձր է լինելու այնտեղ, որտեղ առկա են առավել բարենպաստ ագրոկլիմայական

[4] Տե՛ս **Գ. Ղամբարյան, Ա. Ավագյան,** ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի կատարելագործումը որպես մրցունակության բարձրացման նախապայման: Տարեգիրք–2013, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Եր., 2014, էջ 252–262:

պայմաններ: Դա հատկապես վերաբերում է տեղական հացահատիկային մշակաբույսերին, որոնք ունեն տեղաբաշխման համեմատաբար սահմանափակ արեալ:

Սակայն, ցանկացած դեպքում, տեղաբաշխման արդյունավետությունը, մասնագիտացման խորացումը, համակենտրոնացումը, կոոպերացումը և ինտեգրումը հիմնականում որոշվում են հացահատիկի արտադրության և տեղափոխության միագումար ծախքերի մեծությամբ, ընդ որում, նորարարական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցնում է առաջին գործոնի կշռելիության հարաբերական մեծացմանը և երկրորդի նվազեցմանը: Ուստի հացահատիկային մշակաբույսերի աճեցման առավել բարենպաստ ագրոկլիմայական պայմաններում հացահատիկի առանձին տեսակների արտադրության մասնագիտացված գոտիների ձևավորմանը վերաբերող միտումները միանգամայն օբյեկտիվ տնտեսական հիմք ունեն:

Այս կամ այն տեսակի ապրանքային հացահատիկի արտադրության մասնագիտացված գոտին հենվում է տարածքի կազմակերպման հարմարվողական-լանդշաֆտային սկզբունքի վրա, որը գերակայությունների փոփոխություն է նախատեսում՝ նախապատվությունը տալով բնօգտագործման բնապահպանական սկզբունքին, վերջինս էլ պայմանավորում է էկոլոգիապես մաքուր և համային բարձր հատկանիշներով հացահատիկի արտադրության գծով մասնագիտացումը[5]: Այդ գոտին ներկայացնում է տարածքի մի մասը, որտեղ բարենպաստ բնական և տնտեսական պայմանների արդյունավետ օգտագործումը հացահատիկային մշակաբույսերից առավելապես հացահատիկի արտադրությունն է զարգացրել և համեմատաբար բարձր բերքատվություն ապահովել բարձրացված, իսկ երբեմն նաև հացահատիկի եզակի որակի և համեմատաբար արտադրության ավելի ցածր ծախքերի դեպքում, որը թույլ է տալիս գերակշռող մշակաբույսի ապրանքային հացահատիկի զգալի ծավալները արտահանել տվյալ տարածքի սահմաններից: Այդպիսի գոտու առանձնացման հիմքում ագրոկլիմայական շրջանացման ցուցանիշներն են և հացահատիկային մշակաբույսերի պահանջների ապահովումը աճեցման ագրոտեխնիկական պայմանների առումով: Այդպիսի գոտու առանձնացման չափանիշներից են որևէ տեսակի հացահատիկի արտադրության պահանջ զգալը, կայուն վճարունակ պահանջարկը դրա նկատմամբ, տարածքի ագրոկլիմայական ռեսուրսների ամբողջությունը, սոցիալ-տնտեսական պայմանները:

Հացահատիկի առանձին տեսակների արտադրության նպատակով մասնագիտացված գոտիների ձևավորման և զարգացման համար որպես հացահատիկային արտադրության մեջ աշխատանքի տարածքաճյուղային բաժանման հիմք անհրաժեշտ է.

- Օբյեկտիվորեն գնահատել հացահատիկային արտադրության ժամանակակից վիճակը, այսինքն՝ տեղաբաշխումը, մասնագիտացումը, համակենտրոնացումը, կոոպերացումը և ինտեգրումը:
- Վերլուծել հացահատիկի միջմարզային և միջտարածաշրջանային մատակարարման ձևավորված նպատակահարմարությունը, հանրապետության և առանձին մարզերի ու տարածաշրջանների հատիկա-

[5] Տե՛ս **Վ. Մանասյան**, Գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման հարմարվողական-լանդշաֆտային կազմակերպման համակարգը ՀՀ-ում, «Բանբեր ՀՊՏՀ», 2017, N1, էջ 20–29:

խարի մատակարարման համակարգը (ներառյալ՝ բարձրլեռնային ու սահմանամերձ, անկումային ու ավելցուկային աշխատուժով տարածաշրջանները, արդյունաբերական կենտրոնները և խոշոր քաղաքները):

- Պարզել հացահատիկի և դրա վերամշակման մթերքների արտահանվող ու ներմուծվող ծավալները և բեռնափոխադրության ուղղությունները:
- Իրականացնել հացահատիկի արտադրության և սպառման վերաբերյալ հանրապետության բոլոր մարզերի տիպաբանություն՝ դրանք տարբերակելով ներմուծողների, արտահանողների և ինքնապահովողների: Ընդ որում, անհրաժեշտ է հատկապես առանձնացնել հացահատիկի միջմարզային ու ներմուծող մատակարարումից կախված մարզերն ու տարածաշրջանները: Կարևոր է նաև բացահայտել այն մարզերն ու տարածաշրջանները, որոնց հացահատիկը մրցունակ է ներքին՝ մարզային և միջմարզային հացահատիկի շուկաներում:
- Որոշել հացահատիկի առանձին տեսակների արտադրության գծով խոշորածավալ մասնագիտացված գոտիների ստեղծման, մասնագիտացման խորացման և համայնքային, մարզային ու միջմարզային համակենտրոնացման բարձրացման հետ կապված հնարավոր ռիսկերը և սպառնալիքները:
- Օբյեկտիվորեն գնահատել աշխատանքի տարածքաճյուղային բաժանման մեջ ենթադրվող տեղաշարժերը՝ հաշվի առնելով դրանց ազդեցությունը հացահատիկի արտադրության արդյունավետության և շուկայական մրցունակության վրա:
- Ապահովել հանրապետության մարզերին ու տարածաշրջաններին հացահատիկով և դրա վերամշակման մթերքներով մատակարարման համակարգի գործունեությունը, միջմարզային ապրանքափոխանակության ռեսուրսների ստեղծումը, ազգային պարենային անվտանգության և պարենապահովման վիճակի բարելավումը:

Մասնագիտացված հացահատիկային գոտիների ձևավորման և հիմնական գործառույթների հնարավորություններն ավելի հաճախ որոշվում են արտադրության մեջ դրա բոլոր ուղղությունների գծով նորարարական տեխնոլոգիաների նվաճումների արմատավորմամբ: Դրանցից են սերմնաբուծությունը ու սերմնարտադրությունը, հողաբարելավումը, մեքենայացումը, էկոլոգիացումը, տեղեկատվության փոխանակման համակարգերը և այլն: Միաժամանակ, նորարարական տեխնոլոգիաների նվաճումների արմատավորումը հաճախ խորքային փոփոխություններ է առաջացնում հացահատիկի արտադրության տեղաբաշխման մեջ: Օրինակ՝ Շիրակի և Գեղարքունիքի մարզերի տարածաշրջաններում կարծր ցորենը տարածում է ստացել փափուկ ցորենի սորտերին բերքատվությամբ չզիջող աշնանացան նմուշայինների ստեղծման շնորհիվ: Որպես լրիվ հասունացած հատիկի, նաև փարթամ կանաչ զանգվածի՝ սիլոսի, կանաչ կերի և սենաժի համար եգիպտացորենի վաղահաս և խաչասերումով ստացվող սորտերի աճեցումը Տավուշի և Լոռու մարզերում զգալիորեն տեղաշարժեց դրանց աճեցման ուղղաձիգ լանդշաֆտային գոտիական տարածման վերին սահմանները: Ընդ որում, ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների ագրոարտադրական ռեսուրսային ներուժը, ինչպես նաև դրանց օգտագործման մակարդակը ապահովող նորարարական տեխնոլոգիական նվաճումները որոշում են հացահատիկային մշակաբույ-

սերի այս կամ այն տեսակի տարածման տնտեսապես արդյունավետ արեալները, նախասահմանված տեխնոլոգիական որակի հացահատիկի արտադրությունը ու օգտագործումը, ինչպես նաև միավոր արտադրանքի հաշվով դրամական և աշխատանքային ծախսերը:

Շուկայական հարաբերությունների զարգացման, արտադրության մեջ նորարարական տեխնոլոգիական նվաճումների արմատավորման հետ փոփոխվելու է աշխատանքի տարածքաճյուղային բաժանումը մի կողմից՝ մարզերի ու տարածաշրջանների մասնագիտացման խորացման ներգործությամբ, մյուս կողմից՝հացահատիկային շուկայի վրա պետության ակտիվ ազդեցության շնորհիվ: Սակայն հեռանկարում աշխատանքի տարածքաճյուղային բաժանման առավելությունների օգտագործման վրա հիմնված հացահատիկի առանձին տեսակների արտադրության՝ մարզերի ու տարածաշրջանների տարբերակումը արագացվելու է ավելի մեծ չափերով, քան միտումը ինքնաբավության նկատմամբ: Դա պայմանավորված է ամենից առաջ տարածքի կենսակլիմայական ներուժի էական տարբերություններով, որի մեծությունը հանրապետությունում տատանվում է 0.5(28)-ից մինչև 3,4(187) միավորի սահմաններում[6]:

Ընդ որում, հացահատիկային տնտեսության մասնագիտացման խորացումը և միաժամանակյա միջմարզային փոխանակության ընդլայնումը նպաստում են միասնական ազգային հացահատիկային շուկայի զարգացմանը, որը, իր հերթին, հիմնվում է հացահատիկային արտադրության մեջ աշխատանքի տարածքաճյուղային բաժանման վրա:

Օգտագործված գրականություն

1. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը շրջանային կտրվածքով՝ ըստ տնտեսությունների կարգի 1980–1990 թթ., ՀՀ վիճակագրություն, Եր., 1991:
2. Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում, 2006–2010, ՀՀ ԱՎԾ, վիճակագրական ժողովածու, Եր., 2011:
3. Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում, 2011–2015, ՀՀ ԱՎԾ, վիճակագրական ժողովածու, Եր., 2016:
4. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2016 թ., ՀՀ ԱՎԾ, վիճակագրական տեղեկագիր, Եր., 2017:
5. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2017 թ., ՀՀ ԱՎԾ, վիճակագրական տեղեկագիր, Եր., 2018:
6. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թ., հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, վիճակագրական ժողովածու, Եր., 2017:
7. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թ., հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, վիճակագրական ժողովածու, Եր., 2018:
8. Գ. Ղամբարյան, Ա. Ավագյան, ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի կատարելագործումը որպես մրցունակության բարձրացման նախապայման: Տարեգիրք–2013, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Եր., 2014:
9. Վ. Մանասյան, Գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման հարմարվողական-լանդշաֆտային կազմակերպման համակարգը ՀՀ-ում, «Բանբեր ՀՊՏՀ», N1, 2017:
10. Погосян Д., Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Армянскиой ССР. Ер., Изд-во АН Арм. ССР, 1986.

[6] Տե՛ս **Погосян Д.**, Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Армянскиой ССР. Ер., Изд-во АН Арм. ССР, 1986, էջ 100:

ВОЛОДЯ МАНАСЯН
Доцент кафедры природопользования АГЭУ,
кандидат географических наук

Территориально-отраслевое разделение труда-как основа развитого зернового хозяйства в РА.– В статье рассмотрено место зернового хозяйства в системе территориально-отраслевого разделения труда, раскрываются определяющие его развитие общеисторческие, экономические и агроэкологические закономерности, исследуются современное состояние структуры зерновой подотрасли, углубление специализации и концентрация, а главное, рациональное использование агро-климатического потенциала горной территории РА. Даны предложения по усилению контроля государством процесса территориально-отраслевого разделения труда в зерновом производстве.

Ключевые слова: *территориально-отраслевая структура, зерновое хозяйство, специализированные пояса, вывоз и ввоз зерна, структура посевных площадей, агро-климатический потенциал.*
JEL: O13, Q1, Q13

VOLODYA MANASYAN
Associate Professor at the Chair of Environmental Economics
at ASUE, PhD in Geogrophical Sciences

The Branch DIvision of Labor as the Basis for Developed Grain Economy in the Republic of Armenia.– The article discusses the common historical and economic patterns of grain economy's development, the current state of the cereal subculture, the intensification of the specialization and the concentration, and most importantly, the need for rational use of the agro-chemical potential of the mountainous area. It is suggested that measures should be taken to increase government oversight in the area of grain production, which has been proven to be practical.

Key words: *terretorial branch, specialized zones, import and export, cereal crops, state regulation, agro-chemical potential, regions.*
JEL: O13, Q1, Q13